* * *

Այնքան լեռներ են կուտակուած,
Այնքան քարե՜ր, այնքան քարե՜ր,
Ասես դարերը անհամար
Այստեղ միայն քար են վառել:

Եւ ծաղիկներ քարերի մէջ,
Եւ պտուղներ արեւաշէր,
Դո՛ւ քարքարոտ իմ տաք երկիր,
Սեւանողից շռայլ ու պերճ:

Քարեր ծանր, սարեր ծանր,
Նեղ կածաններ վրայ քաշած,
Երազների եւ իղձերի
Ծիածաններ վրայ քաշած:

Հողմերի մէջ դու մոլորած,
Փոքրի՜կ, փոքրիկ դու սրտի հուր,
Կրակի մէջ հունըդ փորած
Մի կաթիլ կեանք, մի կաթիլ ջուր:

Ինչ անեմ ես բախտիդ համար
Որդիական խենդ իմ սիրով,
Ուրիշներին չտաքացնող,
Իրեն հալող սրտի հրով:

Սիրազորով քո երգերին
Մի բառ էլ ես աւելացնեմ,
Խոր իմաստուն քո գրքերին
Մի տառ էլ ես աւելացնեմ:

Ինչ որ ունիմ այրուող հոգիս
Տամ նուիրեմ բոլորը քեզ,
Յետոյ անթիւ քո քարերին
Մի քար էլ ես աւելացնեմ:

1954    ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@